ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻՆ

Հունիսի 26-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը գտնվելով Ավստրիայում՝ Եվրոպական Եկեղեցիների էկումենիկ երկրորդ համաժողովին մասնակցելու, ինչպես նաև ավստրիահայ համայնքին հայրապետական այցելություն տալու նպատակով, առնելով Սյունիքի մարզում տեղի ունեցած տարերային աղետի և դրա պատճառած մարդկային զոհերի և ավերածությունների լուրը, շտապել է իր ցավակցությունները հայտնել պատահածի առթիվ:

Վեհափառ Հայրապետը նաև տնօրինել է դրամական օժանակություն հատկացնել աղետից տուժած Գորիս քաղաքի իշխանություններին՝ տարերքի հետևանքները վերացնելու համար:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ